ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «03» հուլիսի 2024թ.
ժամը 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,
Քարտուղար՝ Ս.Մելքոնյան,

<u>«ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/10» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի</u>

Գ.Բոշյան

1) Ուսումնասիրելով «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/10» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

1.1) «ՎԱՆՌՈՒԲԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն/ բացակայում է վերջին պարբերությունը՝ «Կից ներկայացվում է հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին հավաստումը»,
- Հավելված N1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն/ իրական շահառուների կայքհողումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները,

1.2) «Ստրոյ Գազ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն/ բացակայում է վերջին պարբերությունը՝ «Կից ներկայացվում է հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին հավաստումը»,

1.3) «ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հայտում առկա է «ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Նեմրութ» ՍՊԸ կողմից համատեղ գործունեության պայմանագիր, սակայն հավելված N1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն/, հավելված N1.1-ում /հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին հավաստում/ և հավելված N2-ում /գնային առաջարկ/ որևէ հիշատակում չկա համատեղ գործունեության (կոնսորցիումի) մասին, հավելվածներում նշված են առանձին ՍՊԸ-ների անվանումները, այնինչ գնման ընթացակարգին պետք է մասնակցեր կոնսորցիումը, ոչ թե առանձին կազմակերպությունները (ինչպես ներկայացված է «ԱՐՏՕՖՇԻՆ» ՍՊԸ և «ԱՐՍԳՈՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի հայտով),
- Համատեղ գործունեության պայմանագրում հայտնի չէ Արամ Երեմյանի պաշտոնը.
- Համատեղ գործունեության պայմանագրի 1.2 կետի համաձայն «ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ներդրել է հետևյալ ավանդները անհարժեշտ որակի և ծավալի համապատասխան

մասնագետներ, մասնագիտական փորձառություն, ֆինանսական միջոցներ, տեխնիկական միջոցներ:

Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ «ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չունի համապատասխան մասնագիտական գործունեություն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա, հետևաբար չի կարող ունենալ մասնագիտական փորձառություն:

Գնահատող հանձնաժողովի համար պարզ չէ «անհրաժեշտ որակի և ծավալի համապատասխան մասնագետներ» նախադասությունը, քանի որ մասնագետները չեն ունենում որակ, այլ ունենում են համապատասխան որակավորում,չեն չափվում ծավալով, այլ մասնակիցները ունենում են քանակ:

Հայտում ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են Հերմինե Անդրեասյանի կողմից:

Սակայն հայտում առկա են երկու նույնաբովանդակ լիազորագրեր, համաձայն որոնց Հերմինե Անդրեասյանը լիազորված է «ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Նեմրութ» ՍՊԸ-ի անունից ստորագրելու ՀՀ տարածքում գնման ընթացակարգերին ներկայացվելիք փաստաթղթերը, կատարողական ակտերը և կատարել այլ անհրաժեշտ գործողություններ:

Սակայն 20.06.2024 թվականի ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/10 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի 2-րդ մասի 2.7 կետի համաձայն հայտում ներկայացված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

Սակայն վերը նշված լիազորագրերը գրվել են ՍՊԸ-ների անուններից հանդես գալու և փաստաթղթեր ստորագրելու համար, որևէ հիշատակում չկա տնօրենների կողմից լիազորված լինելու և էլեկտրոնային թվային ստորագրությամբ հայտում ներառվող փաստաթղթերը հաստատելու լիազորությունների վերաբերյալ:

1.4) «ՖԱՎՈՐԻՏ-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.5) «ԱՐՏ ՕՖ ՇԻՆ» ՍՊԸ և «ԱՐՍԳՈՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 20.06.2024 թվականի ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/10 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի 8.2 կետի 2-րդ պարբերությունը **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- Մերժել «ՇԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 20.06.2024 թվականի ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/10 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**
կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «ՎԱՆՌՈՒԲԻՆ» ՍՊԸ–ին և «Ստրոյ Գազ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 04/07/2024թ.-ը ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցների հայտերը կգնահատվեն հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 8-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ